

**Տեղի ունեցավ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի մամուլի ասուլիսը՝ նվիրված 2015 թվականի երկրորդ կիսամյակի և տարեկան գործունեության արդյունքների ամփոփմանը , 25.12.2015թ.**

Մարզպետը ողջունեց լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին և ցանկություն հայտնեց նրանց ներկայացնելու ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի մոտ ա/թ դեկտեմբերի 4-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետի և մարզպետարանի պատասխանատուների մասնակցությամբ Վայոց ձորի մարզի 2014թ. և 2015թ. սոցիալ-տնտեսական իրավիճակի, առկա հիմնախնդիրների, գերակայությունների և զարգացման ծրագրերի քննարկման նպատակով կայացած խորհրդակցության ընթացքում երկրի Նախագահի կողմից արված ամենակրկնոր 2եշտադրումների վերաբերյալ:

Մարզպետը մեջ բերեց ՀՀ Նախագահի խոսքը . <<Վայոց ձորը բնակչության թվով մեր հանրապետության ամենափոքր մարզերից մեկն է: Բայց սա չի նշանակում, որ մեր ուշադրությունը մարզի նկատմամբ պետք է լինի թերի կամ էլ Վայոց ձորում քիչ աշխատանքներ ունենք անելու, ամեննին՝ ոչ: Առաջին հերթին Վայոց ձորը մեր զբոսաշրջային և առողջարանային կենտրոններից մեկն է, որտեղ վերջին տարիներին շատ լուրջ աշխատանք է կատարվել՝ ենթակառուցվածքները զարգացնելու, նոր հյուրանոցներ կառուցելու, ճանապարհներ և այլն, և այս ուղղությամբ, իհարկե, աշխատանքները պետք է շարունակենք: Բայց նոր բարենպաստ հանգամանքներ են ի հայտ գալիս: Եվ այս հանգամանքները մենք պետք է օգտագործենք, որպեսզի չսահմանափակվենք միայն Ջերմուկի առողջարանային հնարավորություններով կամ էլ՝ Նորավանքի, Մոզրովի և Արենի քարանձավների հնարավորություններով: Որոնք են այդ նոր հանգամանքները. առաջին՝ մենք արդեն ունենք պայմանավորվածություն Համաշխարհային բանկի հետ և մոտակա տարիներին Հանրապետությունում ներդնելու ենք 55 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ զուտ զբոսաշրջության ոլորտը զարգացնելու նպատակով: Երկրորդ հանգամանքն այն է, որ Վայոց ձորի մարզով է անցնելու մեր կարևորագույն տրանսպորտային երակը՝ Հյուսիս-հարավ ճանապարհը, ծայրից ծայր մարզով է կտրելու-անցնելու: Եվ այս երկու հանգամանքը հնարավորություն է ընձեռում, որպեսզի մենք, այսպես ասած, ցանցային մոտեցում ցուցաբերենք զբոսաշրջությանը մարզում>>: Մարզպետն նշեց, որ ՀՀ Նախագահը կարևորեց մարզի տնտեսական զարգացման վրա շատ լրջորեն ազդելու մեկ այլ հանգամանք ևս, որը՝ հնարավոր կդառնա 2016թ.-ի գարնանից Ամուլսարի ոսկու հանքերի պաշարների շահագործման նպատակով գործարանի կառուցումով, քանզի Վայոց ձորի համար դա նշանակում է հազարից ավելի լրացուցիչ աշխատատեղ, սակայն ՀՀ Նախագահը նշել է, որ Վայոց ձորի մարզպետարանը և շահագործման գոտում գտնվող երեք համայնքները խնդիրն ունեն՝ որևէ միլիմետր անգամ չզիջել բնապահպանական հարցերում, թեև արդեն երկար տարիներ՝ երևի 8-9 տարի, խոսվում է այդ հանգամանքի մասին, և ոչ միայն խոսվել, այլ նաև մեծ աշխատանք է կատարվել միջազգային բնապահպանական փորձաքննություններ անցկացնելու ուղղությամբ: Մարզպետը ներկայացրեց նաև երկրի նախագահի հանձնարարականները, որոնք ուղղված են եղել մարզի կենսագործունեության տարբեր ոլորտների ( առողջապահություն, կրթություն, մարզա-մշակութային, գյուղատնտեսություն, բնապահպանություն, զբոսաշրջություն) զարգացմանը:

Այնուհետև մարզպետ Հ. Սարգսյանը ներկայացրեց ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի և մարզպետի 2015 թվականի երկրորդ կիսամյակի և տարեկան գործունեության արդյունքները: Նշեց, որ ընթացիկ տարվա 6 ամիսների ընթացքում մարզպետարանում մշտապես քննարկվել են մարզի կենսագործունեության տարբեր ոլորտներում առկա խնդիրների վերաբերող հարցեր: Հ. Սարգսյանը կարևորեց համայնքային այցելությունները, որոնք կրել են պարբերական բնույթ և լինելու են շարունակական, քանզի այցելությունների ընթացքում նա տեղում ծանոթացել է համայնքապետարաններում, համայնքային կազմակերպություններում առկա խնդիրներին: Մարզպետը կարևորեց ՀՀ կառավարության կողմից վարվող մարզերի համաչափ զարգացմանն ուղղված քաղաքականությունը և հավելեց, որ արվում է հնարավոր ամենը՝ ՀՀ մարզպետարաններին տարբեր ծրագրերի մեջ ընդգրկվելու միջոցով, օժանդակելու համայնքային հրատապ խնդիրների լուծման հարցերում: Ներկայացվեց կատարված աշխատանքներն ըստ ոլորտների՝

## **Քաղաքաշինություն**

ՀՀ Կառավարության 2 հուլիսի 2015 թվականի թիվ 766-Ն որոշմամբ մարզի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման համար մարզի 11 օբյեկտներում 2015թ. 2-րդ կիսամյակում կատարվել են 193.5 մլն. ՀՀ դրամի շին-մոնտաժային աշխատանքներ, իսկ 18 հունիսի 2015թվականի թիվ 673-Ն որոշմամբ Ջերմուկ քաղաքի Արփա գետի կիրճի հետիոտն ճեմուղու վերականգնման և բարեկարգման աշխատանքների համար հատկացվել է 157.666մլն. ՀՀ դրամ, որից 2015թ. 2-րդ եռամսյակում կատարվել է 23.1 մլն ՀՀ դրամի շինարարական աշխատանքներ:

Գյուղական համայնքների տնտեսական զարգացման ԾԻԳ պետական հիմնարկության միջոցներով մարզի Մալիշկա, Գետափ, Արփի, Զառիթափ և Փոռ համայնքներում իրականացվել է գազիֆիկացման աշխատանքներ 514.8 մլն. ՀՀ դրամի: Առաջին կիսամյակում իրականացվել է 169.0 մլն. դրամի շին-մոնտաժային աշխատանքներ, իսկ 2-րդ կիսամյակում՝ 290.84 մլն. ՀՀ դրամի:

## **Ճանապարհաշինություն**

2015 թ. երկրորդ կիսամյակի ընթացքում իրականացվել 118.7 կմ մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման աշխատանքներ, իսկ 33.1 կմ ընթացիկ պահպանման աշխատանքներ, իսկ ՀՀ Կառավարության 1 հոկտեմբերի 2015 թվականի թիվ 1126-Ն որոշմամբ հատկացված 20 մլն. ՀՀ դրամի գումարի շրջանակներում իրականացվել է Գետափի համայնքի ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները:

## **Բյուջետային հատկացումները՝ հաշվետու ժամանակահատվածում**

2015 թվականի ընթացքում մարզին 22 ծրագրերով պետբյուջեից ֆինասավորումը կատարվել է 3218.0 մլն ՀՀ դրամ, որից՝ 1886.7 ՀՀ մլն դրամ ծախսվել է կրթության ոլորտում: Մշակույթի ոլորտին հատկացվել է 22.2 ՀՀ մլն դրամ, որից պետական աջակցության մշակութային միջոցառումների իրականացման համար հատկացվել է 4.9 մլն ՀՀ դրամ: Մարզի 44 համայնքների բյուջեներին ամրագրված սեփական եկամուտների հավաքագրումը կատարվել է 97.5 %-ով (25.12.2015 թվականի դրությամբ): ՀՀ 2015 թվականի ընթացքում պետական բյուջեից համայնքների հատկացված դոտացիան կազմում է 920.1 մլն. ՀՀ դրամ, ֆինասավորվել է 100%-ով, աճը 2014 թվականի համեմատ կազմել է 11.2%:

## **Կրթություն**

Մարզում գործում է 50 հանրակրթական դպրոց, որոնցից 14 հիմնական, 36 միջնակարգ, այդ թվում՝ 2 վարժարան, ինչպես նաև 2 ավագ դպրոց, 1 կրթահամալիր, որոնք գործում են ՀՀ ԿԳ նախարարության ենթակայությամբ: Գործում է 1 ԲՈՒՀ՝ ԵՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղը և 1 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն՝ Եղեգնաձորի պետական տարածաշրջանային քոլեջը: Քաղաքային և գյուղական համայնքներում գործում է 17 մանկապարտեզ, որոնցում ընդգրկված են 1044 երեխաներ: Մարզում գործում է 24 նախակրթարան: Աշակերտների թիվը կազմում է 6541: Աշխատում են 1076 ուսուցիչներ: Մարզային ենթակայության միջնակարգ դպրոցները կունենան 521 շրջանավարտներ :

## **Առողջապահություն**

Մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար հատկացվել է 691 701.2 հազար դրամ: 2015թ. 11 ամիսների ընթացքում մատուցվել է 35645.4 հազար դրամի վճարովի բժշկական ծառայություններ: Ավարտին է մոտենում <<Հոփսիմե գյուղական բժշկական ամբուլատորիա>> ՊՈԱԿ-ի

նոր շենքի կառուցումը, որի համար ՀԲ-ի և ՀՀ կառավարության միջոցներից ներդրվել է շուրջ 65 մլն. ՀՀ դրամ: Նախատեսվում է 2016թ.-ին մարզի բուժհաստատությունների շենքային պայմանների բարելավվում՝ Եղեգնաձորի ԲԿ-ի ռենտգեն բաժանմունքի և Վայքի ԲՄ-ի ինֆեկցիոն բաժանմունքի վերանորոգումը: Վայքի ԲՄ-ին տրամադրվել է ժամանակակից բժշկական սարքավորումներ անզգայնացման սարք, վիրաբուժական լամպ, ֆունկցիոնալ մահճակալ: 2016թ.-ին մարզին կտրամադրվի 1 թվային ֆլյուրոգրաֆիա: Հանրապետության առաջատար բժիշկ մասնագետների կողմից հաճախակի կազմակերպվում է «Բաց դռների օր», որի արդյունքում 2015թ.-ին հետազոտվել են 642 հիվանդներ:

### **Սոցիալական ապահովության բնագավառ**

Ձեռնարկվել է համապատասխան միջոցառումներ նպաստի համակարգին պետական բյուջեից հատկացվող միջոցների հասցեականության պահպանման և նպատակային օգտագործման ուղղությամբ: Արդյունքում Հանրապետությունում նպաստառու ընտանիքների միջին թիվը կազմել է 13.4%, իսկ մարզում 12%: Մարզում ամսական նպաստ է ստանում 2077 ընտանիք, ամսական վճարվում է 57մլն դրամ նպաստ: Կենսաթոշակառուների թիվը 9919 է, ամսական վճարվում է 381 մլն դրամ կենսաթոշակ: Մարզի ՁՏԿ -ներում 2015թ. գրանցվել է 1131 գործազուրկ, որից 308-ը տեղավորվել է աշխատանքի:

### **Գյուղատնտեսություն**

Մարզում գյուղատնտեսության զարգացման նպատակով 2015 թվականին պետական աջակցության ծրագրերով շուկայականից ցածր գներով մարզի հողօգտագործողներին հատկացվել է պարարտանյութ՝ ազոտական՝ 428 տ, ֆոսֆորական՝ 10.65տ, կալիումական՝ 10.75տ, իսկ դիզվառեյլանյութ՝ 31350լ: Տրամադրվել է զարնանացան գարու, առվույտի, եգիպտացորենի, կորնզանի սերմացու շուրջ 95.67տ ընդհանուր քաշով: 2015 թվականին նախորդ տարվա համեմատ 1021 հա-ով ավելացել են ցանքատարածությունները: «Հայկական միրգ» ծրագրով 2015 թվականին մարզի համայնքներում հիմնվել է՝ 46.12 հա պտղատու այգի:

2015թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է՝ 22 578 գլուխ խոշոր եղջերավոր, 24 824 գլուխ մանր եղջերավոր անասուններ, խոզեր՝ 2048 գլուխ, թռչուններ՝ 139 439 թև և 21 855 փետակ մեղվաընտանիք: Նախորդ տարվա համեմատ առկա է անասնազլխաքանակի աճ՝ խոշոր եղջերավոր անասուններ՝ 142 գլուխ, մանր եղջերավոր անասուններ՝ 1789 գլուխ: Անասնաբուծության զարգացման նպատակով մարզի Գնդեվազ համայնքում կառուցվել է և ընթացիկ տարվա առաջին կիսամյակում շահագործման է հանձնվել խոշոր եղջերավոր անասունների տոհմաբուծական ֆերմա և կաթի մթերման ու վերամշակման մեկ ձեռնարկություն, նախատեսված 350 գլուխ կաթնատու կովի և 150 գլուխ երինջի համար:

2015թ.-ին լիզինգային եղանակով ձեռք է բերվել Բելառուսի Հանրապետությունից ներկրված «Նիվա Էֆեկո» մակնիշի մեկ հացահատիկահավաք կոմբայն, իսկ մասնավոր գնումով ձեռք է բերվել CAT 320 DL մակնիշի մեկ էքսկավատոր, YUTO-404 մակնիշի մեկ տրակտոր, մեկ հատ «Սամպո» մակնիշի հացահատիկահավաք կոմբայն, երկու հատ E 302 մակնիշի կերահավաք կոմբայն, երկու հատ T 150 մակնիշի անիվավոր տրակտոր, մեկ հատ ազոտական գութան, երկու հատ կուլտիվատոր, մեկ հատ շարքացան, երկու հատ կախովի խոտհնձիչ, մեկ խոտհավաք: Ընդհանուր առմամբ 2015թ ձեռք է բերվել 8 միավոր տարբեր հզորության գյուղ տեխնիկա և յոթ միավոր գյուղ գործիքներ: Ինտենսիվ գյուղատնտեսություն վարելու նպատակով կազմավորվում են գյուղատնտեսական կոոպերատիվներ:

**Մարզում «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում** ընդգրկվել են Աղնջաձոր, Ռինդ, Վերնաշեն, Զառիթափ և Սարավան համայնքները: Նախատեսվում են կատարել արոտների ջրարբիացման, կերախմոցների տեղադրման, ճանապարհների բարեկարգման, ջրընդունիչների և փարախների կառուցման աշխատանքներ՝ մոտավորապես 100 մլն ՀՀ դրամ արժողությամբ:

Գյուղատնտեսական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով համայնքներում

ստեղծված կոոպերատիվներին նախատեսվում է տեխնիկայի ձեռք բերման համար տրամադրել շուրջ 202 մլն ՀՀ դրամ:

Մարզում արտադրվել է 5708 տ խաղող, որից մթերվել է 4645 տ, իսկ պտուղ՝ 8440 տ որից մթերվել է 260 տ., իսկ բանջարանոցային մշակաբույսեր է 9403 տ, որից մթերվել է՝ 50տ:

## **Արդյունաբերություն**

2015թ.-ի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում թողարկվել է 11 127.8 մլն ՀՀ դրամի (ընթացիկ գներով) արդյունաբերական արտադրանք, որը կազմել է հանրապետությունում արտադրված արտադրանքի 1.2%-ը: 2015թ.-ի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում արդյունաբերական արտադրանքի ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համադրելի գներով համեմատելիս աճի տեմպը կազմել է՝ 87.4%: Մասնավորապես հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման արդյունաբերական աճի տեմպը կազմել է 15.9%, մշակող արդյունաբերությանը՝ 81.9%, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարմանը՝ 104.8%, ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակմանը՝ 120.1% :

Վայոց ձորի մարզում գրանցված են 69 արտադրական և 249 առևտրային ձեռնարկություններ: Խոշոր արտադրական ձեռնարկություններից են «Ջերմուկ Գրուպ» ԲԲԸ, «Ջերմուկի մայր գործարան» ԲԲԸ, Եղեգնաձորի պահածոների գործարանը, «Ռաֆել Գրիգ» ՍՊԸ, «Գետնատուն» ՍՊԸ, «Գետափի գինու գործարան» ՍՊԸ, «Վայք Գրուպ» ՓԲԸ: 2015թ.-ին մարզի արդյունաբերական կազմակերպություններում, առևտրի և սպասարկման ոլորտի ձեռնարկություններում աշխատում է 3770 մարդ, որից արդյունաբերության ոլորտում զբաղվածների թիվը կազմում է 1590 մարդ, իսկ առևտրի և սպասարկման՝ շուրջ 2180 մարդ: 2015թ.-ին մարզկենտրոնում վերաբացվել է Եղեգնաձորի պահածոների գործարանը, որտեղ աշխատում են ավելի քան 240 մշտական և ժամանակավոր աշխատողներ:

Մարզում գործարարության աշխուժացման նպատակով բազմակողմ համագործակցության հուշագիր է ստորագրվել Իրանի իսլամական Հանրապետության Ուրմիա նահանգի, ՌԴ Նիժնի-Նովոգորոդի, Արխանգելսկի, Բելոռուսիայի Հանրապետության Մինսկի մարզերի և ՀՀ Վայոց ձորի մարզի ղեկավարությունների միջև:

## **Զբոսաշրջություն**

Զբոսաշրջությունը Վայոց ձորի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Մարզի 1200 պատմամշակութային հուշարձաններ՝ տարածված 44 համայնքներում: Ժամանակագրական առումով դրանք ներկայացնում են մեր թվարկությունից առաջ 4-րդ հազարամյակից մինչև 20-րդ դարն ընկած հատվածը:

Բազաթիվ պատմամշակութային և ճարտարապետական հուշարձանների, բնական տեսարժան վայրերի առկայությունը, բուսական և կենդանական աշխարհի բազմազանությունը, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, Ջերմուկի առողջարանի և հանգստյան գոտու ճանաչվածությունը և ձմեռային զբոսաշրջության համար նրա կարողությունները մարզը դարձրել են զբոսաշրջության համար գրավիչ և նպաստավոր տարվա չորս եղանակների համար: Այժմ զբոսաշրջության ձևերի մեջ տեղի են ունենում որակական փոփոխություններ: Պասիվ հանգստի ձևերից անցում է կատարվում դեպի ավելի ակտիվ ձևերը: Վայոց ձորի մարզում կարելի է առաջադրել զբոսաշրջության հետևյալ ուղղությունները՝ էկոտուրիզմ, գիտական տուրիզմ, բնական տուրիզմ, արկածային տուրիզմ (ժայռամագլցումներ, անձավագիտական տուրեր, լեռնային և հետիոտն երթեր, ձիավորություն լեռնային տարածքներով, կանյոնինգ, ձկնորսություն), պատմամշակութային տուրիզմ:

Մարզում գործում են բազմաթիվ ժամանցի վայրեր, հիսունից ավելի առողջարաններ և հյուրանոցներ, 32 մշտական և 47 սեզոնային սննդի օբյեկտներ, 81 տնային հյուրանոցներ, 6 գինու համեսի սրահներ: Ծնորհիվ Հայաստանի Հանրապետությունում վարվող պետական

քաղաքականության, զբոսաշրջության բնագավառում վերջին տարիներին արձանագրվել է քանակական և որակական աճ: 2015 թվականի առաջին 10 ամիսների ընթացքում զբոսաշրջիկների թիվը հասել է 28000-ի: Զգալիորեն զարգացել են ենթակառուցվածքները՝ ճանապարհները, հյուրանոցային տնտեսությունը, սննդի ու զվարճանքի օբյեկտները, բարձրացել է մատուցվող ծառայությունների որակը: Դրանով է պայմանավորված ՌԴ-ում զբոսաշրջությամբ զբաղվող հայ գործարարների խոշոր ներդրումները Ջերմուկ քաղաքում, մասնավորապես "Ջերմուկ" հյուրանոց ջրաբուժարանի կառուցումը և Ջերմուկ քաղաքի "Ռեզորտ" առողջարանի կառուցումը: Ընդհանուր առմամբ Ջերմուկ քաղաքում գործում է 8 առողջարան, 12 հյուրանոցներ և շուրջ 25 հյուրատներ: Ամբողջը միասին կազմում է 1420 մահճակալ/օր:

Վայոց ձորի Գոմք, Ջառիթափ և Մարտիրոս համայնքներում ստեղծվել են նոր էկոերթուղիներ: Այս նախաձեռնությունն իրականացել է ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից ՀԿ-ներին տրամադրվող դրամաշնորհային ծրագրի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հայտարարած մրցույթի շրջանակներում:

Լրատվամիջոցների և ՀԿ ներկայացուցիչների կողմից հնչեցին սոցիալական և առողջապահական, գյուղատնտեսության և ոռոգման խնդիրներին, մարզի զարգացման ծրագրերին, ինչպես նաև ներհամայնքային ճանապարհների վերանորոգման, միջհամայնքային ուղևորափոխադրումներին, այլ համայնքներում աշխատող մանկավարժների տեղափոխման, ավանդների վերադարձման կարգի մեջ տեղի ունեցած փոփոխություններին վերաբերող հարցեր:

Մարզպետ Հ. Մարգարյանը բոլոր հարցերին պատասխանեց հանգամանորեն: